ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

ԿՈԴ
050.0068 Ա. 26.04.22

26 ապրիլի 2022 թվականի թիվ 68 Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ» ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ և 31-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

Որոշում է.

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվության» վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի եզրակացությունը (կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի տեղակալ

2022 թ. ապրիլի 28
Երևան

Ներսես Երիցյան

ՀՀ կենտրոնական բանկի եզրակացությունը
Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի
կատարման տարեկան հաշվետվության վերաբերյալ[1]

Մակրոտնտեսական միջավայր[2]. 2020 թվականի խորը տնտեսական անկումից հետո Հայաստանի տնտեսությունը **2021 թվականին վերականգնվել է սպասվածից բարձր տեմպերով՝ արձանագրելով տնտեսական աճի 5.7% մակարդակ**: Տնտեսական աճի վերականգնմանը նպաստել են և՛ համաշխարհային տնտեսության, այդ թվում՝ հիմնական գործընկեր երկրների աճի վերականգնմամբ պայմանավորված պահանջարկի ավելացումը, և թե՛ ներքին պահանջարկի աճի գործոնները: Վերջինս հիմնականում պայմանավորված էր մասնավոր հատվածի սպառման աճով, որին նպաստել են անցած տարվա ընթացքում կուտակված խնայողությունների բարձր մակարդակը և արտերկրից ներհոսող դրամական փոխանցումների աճը: Կապիտալ ներդրումները ևս որոշակի վերականգնվել են՝ պայմանավորված ինչպես պետական, այնպես էլ մասնավոր ներդրումների աճով: Չնայած հարկաբյուջետային հարաբերական զսպող քաղաքականությանը, ներքին պահանջարկի վերականգնմանը նպաստող գործոններից է եղել նաև կորոնավիրուսի ու Արցախյան պատերազմի հետևանքների մեղմմանն ուղղված միջոցառումների շարունակումը, որոնք ընդհանուր առմամբ կազմել են ՀՆԱ-ի 2.7%-ը:

Առաջարկի մասով, տնտեսական աճը հիմնականում պայմանավորված էր ծառայությունների ոլորտի էական ընդլայնմամբ, որին իր դրական ազդեցությունն է փոխանցել զբոսաշրջային այցելությունների զգալի աճը: Շինարարության և արդյունաբերության ճյուղերում ևս արձանագրվել է ակտիվության վերականգնում, մինչդեռ գյուղատնտեսության ճյուղի նվազումը բացասաբար է նպաստել տնտեսական աճի զարգացումներին:

Համաշխարհային և ներքին տնտեսությունում պահանջարկի վերականգնումն արտացոլվել է և՛ արտահանման և՛ ներմուծման ծավալների աճում: Ընդ որում, ներմուծման աճը որոշակի զիջել է արտահանման աճին, որին մեծամասամբ նպաստել են համաշխարհային տնտեսության վերականգնմամբ պայմանավորված մետաղների

---

[1] ՀՀ կենտրոնական բանկը պետական բյուջեի կատարման մասին հաշվետվության վերաբերյալ եզրակացության կազմման շրջանակներում առաջնորդվում է բյուջեի կատարողականի՝ միջնաժամկետ պարտքի կայունության ապահովման, հարկաբյուջետային քաղաքականության պարբերաշրջանային ուղղվածության ու դիրքի, երկարաժամկետ աճին նպաստելու և այլ սկզբունքների ներքո գնահատականների ներկայացմամբ:

[2] Սույն փաստաթղթում բերված թվային տվյալները և գնահատականները վերցված են ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի կատարման մասին հաշվետվությունից:

գների աճը, ինչպես նաև զբոսաշրջության արագ վերականգնման արդյունքում ծառայությունների արտահանման էական ավելացումը:

ՀՀ արտաքին հաշվեկշռվածության բարելավմանը նպաստել է նաև ԱՄՆ-ից ու այլ երկրներից ֆիզիկական անձանց դրամական փոխանցումների պահպանվող բարձր աճը: Արդյունքում, 2021 թվականին տնտեսության արտաքին դիրքը նախորդ տարվա համեմատ որոշակի բարելավվել է, իսկ ընթացիկ հաշվի պակասուրդը կազմել է ՀՆԱ 3.7%-ը:

Գնաճի զարգացումներ և դրամավարկային քաղաքականություն. Ներքին և արտաքին հատվածում պահանջարկի արագ վերականգնումը առաջարկի շղթաների խաթարումների և հարաբերականորեն թույլ կարողությունների պայմաններում նպաստել է արտաքին և ներքին գնաճային միջավայրի ընդլայնմանը: Արդյունքում, **Հայաստանում բարձր գնաճային միջավայրը պահպանվել է ողջ տարվա ընթացքում:** Գների կայունության ապահովման նպատակով, 2021 թվականին ՀՀ ԿԲ-ն վարել է դրամավարկային պայմանների խստացման քաղաքականություն՝ աստիճանաբար չեզոքացնելով խթանող դիրքը: **Տարվա ընթացքում քաղաքականության տոկոսադրույքը բարձրացվել է ընդհանուր առմամբ 2.5 տոկոսային կետով**, որի արդյունքում 12-ամսյա գնաճը չորրորդ եռամսյակում որոշ չափով նվազել է և տարեվերջին կազմել 7.7%: Միևնույն ժամանակ, կորոնավիրուսի համավարակի և ռազմական դրության հայտարարումից հետո, նախորդ տարեվերջից պահպանվող էական անորոշությունների պայմաններում ՀՀ կենտրոնական բանկը հետևողական է եղել ֆինանսական շուկաներում հնարավոր խնդիրների արագ և արդյունավետ լուծմանը՝ ապահովելով ֆինանսական և արժութային շուկայի բնականոն գործունեությունը: Նման պայմաններում փողի շուկայի տոկոսադրույքները ձևավորվել են Կենտրոնական բանկի քաղաքականության տոկոսադրույքի շուրջ:

Հարկաբյուջետային քաղաքականություն. Հարկաբյուջետային կայունության պահպանման և միջնաժամկետ տնտեսական աճի վերականգնման համար բարենպաստ միջավայրի ձևավորման նպատակով **2021 թվականին հարկաբյուջետային քաղաքականության ընթացքը պայմանավորվել է սահուն կոնսոլիդացիայի ճանապարհով պարտքի որոշակի նվազեցմամբ: Վերջինս բնականաբար ուղեկցվել է հարաբերականորեն զսպող քաղաքականության իրականացմամբ:** Ընդ որում, տնտեսական աճի սպասվածից ավելի արագ վերականգնման պայմաններում հարկաբյուջետային քաղաքականության միջոցառումներն, ընդհանուր առմամբ, ուղեկցվել են հարկերի հավաքագրման բարելավմամբ, ինչպես նաև պետական ծախսերի գծով ծրագրային ցուցանիշների ավելացմամբ: 2021 թվականին շարունակվել է հակաճգնաժամային միջոցառումների

իրականացումը՝ ուղղված ինչպես կորոնավիրուսի, այնպես էլ Արցախյան պատերազմի բացասական հետևանքների մեղմմանը:

Տնտեսական աճի վերականգնումը, ինչպես նաև հարկային օրենսդրության փոփոխությունները և վարչարարության բարելավումը իրենց դրական ազդեցությունն են ունեցել հարկային եկամուտների հավաքագրման վրա, որի արդյունքում 2021 թվականին հարկային եկամուտների գծով արձանագրվել է 14.6% աճ: Նման պայմաններում, սակայն, **հարկային եկամուտները ՀՆԱ-ում ավելացել են ընդամենը 0.3 տոկոսային կետով, ինչը դեռևս ցածր է, քան Կառավարության ծրագրով նպատակադրված թիրախն է:** Հատկանշական է, որ բացի վերը նշված գործոններից, 2021 թվականի հարկային եկամուտների աճի վրա նշանակալի ազդեցություն են ունեցել նաև դրոշմանիշային և պարտադիր սոցիալական վճարների աճը, ինչպես նաև մետաղական խտանյութերի պետական տուրքի ներդրումը: Վերջինիս շարունակական բարեփոխումը և միջազգային պրակտիկայում գործող չափանիշներին համապատասխան **ռոյալթիների արդյունավետ մեխանիզմի ներդրումը էապես կարևորվում է երկարաժամկետ կայուն զարգացմանն ուղղված հարկային քաղաքականության իրականացման տեսանկյունից:**

Ընդհանուր առմամբ, ՀՀ պետական բյուջեի եկամուտները ՀՆԱ-ում նախորդ տարվա նկատմամբ նվազել են 0.9 տոկոսային կետով, ինչը հարկային եկամուտների ավելացման ֆոնին պայմանավորվել է այլ եկամուտների և դրամաշնորհների էական նվազմամբ: Նշվածը պայմանավորված է նախորդ տարում դրանց համեմատաբար բարձր ցուցանիշների արձանագրմամբ (այլ եկամուտների մասով՝ 2020 թվականին «Հայաստան» համահայկական հիմնադրամից պետական բյուջե մուտքագրված միջոցներով, իսկ դրամաշնորհների մասով՝ 2020 թվականին համավարակի պայմաններում դոնորներից ստացված դրամաշնորհներով):

Հաշվետու ժամանակաշրջանում պետական ծախսային քաղաքականությունը առաջնորդվել է տնտեսական աճի ներուժի վերականգնման և պարտքի աստիճանական կայունացման սկզբունքներով, այդ թվում՝ կարևորելով համավարակի և Արցախյան պատերազմի հետևանքների մեղմմանն ուղղված ծախսերի և ծրագրերի իրականացումը: Արդյունքում, **2021 թվականի ՀՀ պետական բյուջեի ծախսերը նախորդ տարվա համեմատ աճել են 5.8%-ով՝ պայմանավորված մեծամասամբ ընթացիկ ծախսերի աճով, մինչդեռ կապիտալ ծախսերի գծով արձանագրվել է 4.1 տոկոս նվազում**[3]: Հարկ է նշել, որ ՀՆԱ-ի սպասվածից ավելի բարձր մակարդակի պայմաններում, ծախսերի անվանական աճն ուղեկցվել է ՀՆԱ-ում տեսակարար կշռի 1.9

[3] Նախորդ տարվա նկատմամբ կապիտալ ծախսերի նվազումը պայմանավորված է 2020 թվականի ընթացքում ռազմական բնույթի ծախսերի իրականացման ավարտով և 2021 թվականի ընթացքում առանձին ծրագրերի ցածր կատարողականով:

տոկոսային կետով նվազմամբ: Ընդ որում, ընթացիկ ծախսերի կշիռը ՀՆԱ-ում նվազել է 1.4 տոկոսային կետով, իսկ կապիտալ ծախսերի կշիռը՝ 0.6 տոկոսային կետով: **Վերջինս կազմել է ՀՆԱ-ի 3.1 %-ը՝ զգալիորեն զիջելով տարվա համար նախատեսված, ինչպես նաև Կառավարության ծրագրով նպատակադրված թիրախին:** Միևնույն ժամանակ, 2021 թվականին 7.6 տոկոսային կետով բարելավվել է կապիտալ ծախսերի կատարման մակարդակը՝ ճշտված ծրագրի նկատմամբ կազմելով 92.5%՝ նախորդ տարվա 84.9%-ի համեմատ: Հատկանշական է, որ բարելավումն արձանագրվել է և՛ արտաքին, և թե՛ ներքին աղբյուրների հաշվին իրականացվող ծրագրերի մասով՝ ծրագրի նկատմամբ արձանագրելով համապատասխանաբար՝ 88.3% և 95.1% կատարողական:

Այսպիսով, շարունակելով կորոնավիրուսի սոցիալ-տնտեսական հետևանքների չեզոքացմանն ուղղված հակաճգնաժամային միջոցառումների և Արցախյան պատերազմի հետևանքով լրացուցիչ ծախսերի իրականացումը՝ **պետական բյուջեի ծախսերի կատարումը, ինչպես և ծրագրված էր, ուղեկցվել է հարկաբյուջետային կանոններով նախատեսված բացառիկ դեպքի կիրառմամբ[4]:** Այսպես, բյուջեի պակասուրդը շարունակել է գերազանցել կապիտալ ծախսերը, իսկ ընթացիկ առաջնային ծախսերի աճը գերազանցել է նախորդ 7 տարիների անվանական ՀՆԱ-ի աճի միջին տեմպը: Միևնույն ժամանակ, հարկ է արձանագրել, որ տնտեսական աճի սպասվածից բարձր մակարդակի պայմաններում, 2021 թվականի ՀՀ պետական բյուջեի ծախսերը համախառն պահանջարկի վրա ունեցել են զսպող ազդեցություն: Այսպիսով, բարձր գնահատելով տնտեսական մարտահրավերների հաղթահարմանն ուղղված ծախսային միջոցառումների իրականացումը, ինչպես նաև տնտեսության սպասվածից ավելի արագ վերականգնմանը համարժեք հակացիկլիկ քաղաքականության որդեգրումը, **անհրաժեշտ ենք համարում շեշտադրել երկարաժամկետ ներուժային աճի համար ամուր հիմքերի ձևավորմանն ուղղված պետական ծախսային ռազմավարության հրամայականը:**

2021 թվականին տնտեսական աճի սպասվածից ավելի արագ վերականգնման, ինչպես նաև իրականացվող սահուն կոնսոլիդացիայի պայմաններում **ՀՀ պետական բյուջեի պակասուրդը և Կառավարության պարտքը ՀՆԱ-ի նկատմամբ կրճատվել են կանխատեսվածից ավելի մեծ չափերով:** Այսպես, 2021 թվականին ՀՀ պետական

---

[4] 2018 թվականի հունվարի 27-ից ուժի մեջ մտած ՀՀ հարկաբյուջետային կանոններով սահմանված սահմանափակումները չեն գործում Կառավարության որոշմամբ սահմանված բացառիկ դեպքերում՝ ելնելով խոշորածավալ տարերային և տեխնածին աղետների, պատերազմական գործողությունների, տնտեսությունը խաղաղ ժամանակաշրջանից պատերազմական ժամանակաշրջանի փոխադրման, տնտեսական ցնցման հանգամանքներով պայմանավորված բացասական տնտեսական զարգացումների առկայությունից:

բյուջեի պակասուրդը նախորդ տարվա նկատմամբ նվազել է 4.0%-ով և կազմել 320.5 մլրդ դրամ՝ 10.8 տոկոսով զիջելով ծրագրով նախատեսված ցուցանիշին: Արդյունքում, ՀՀ պետական բյուջեի պակասուրդը կազմել է ՀՆԱ-ի 4.6%-ը՝ նախորդ տարվա 5.4 տոկոսի դիմաց: Ծրագրի համեմատ պակասուրդի ցածր մակարդակը հիմնականում արտահայտվել է արտաքին աղբյուրներից փոխառությունների ստացման ցածր ցուցանիշում:

2020 թվականի համեմատ զգալիորեն փոխվել է պակասուրդի ֆինանսավորման աղբյուրների կառուցվածքը: Եթե նախորդ տարի պակասուրդն ամբողջությամբ ֆինանսավորվել էր ներքին աղբյուրների հաշվին, ապա 2021 թվականին այն զգալի չափով ֆինանսավորվել է արտաքին աղբյուրներից՝ պայմանավորված արտարժութային պետական պարտատոմսերի թողարկմամբ: Ընդ որում, եվրոպարտատոմսերի տեղաբաշխումից ստացված, ինչպես նաև պետական բյուջեի կատարման ընթացքում գոյացած ազատ միջոցներից Կառավարության կողմից ավանդադրումը ԿԲ-ում աճել է 178 մլրդ դրամով և 2021 թվականի դեկտեմբերի վերջի դրությամբ կազմել 380. 0 մլրդ դրամ:

Ինչ վերաբերում է ՀՀ կառավարության պարտքին, ապա **պարտք/ՀՆԱ ցուցանիշը նախորդ տարվա նկատմամբ նվազել է ծրագրվածից ավելի մեծ՝ 3.2 տոկոսային կետով և կազմել 60.3%՝ դեռևս պահպանվելով հարկաբյուջետային կանոններում ներառված 60% սահմանային մակարդակից բարձր:** Արդյունքում, կարևորելով տնտեսության վերականգնման և միջնաժամկետ աճին ուղղված ծրագրերի իրականացումը, **անհրաժեշտ ուշադրության է արժանի հարկաբյուջետային գործող կանոնների շրջանակներում Կառավարության կողմից պարտքի նվազեցմանն ու կայունացմանն ուղղված միջոցառումների հետևողական իրականացումը**:

Այսպիսով, հարկային եկամուտների ՀՆԱ-ում աճի և պետական բյուջեի ծախսերի ՀՆԱ-ում տեսակարար կշռի նվազմամբ ուղեկցվող **հակացիկլիկ հարկաբյուջետային քաղաքականությունը 2021 թվականին համախառն պահանջարկի վրա ունեցել է զսպող ազդեցություն:** Վերջինս, դրամավարկային քաղաքականության հետ արդյունավետ համադրմամբ, նպաստավոր միջավայր է ձևավորել ՀՀ-ում մակրոտնտեսական կայունության ապահովման, ինչպես նաև հիմքեր ստեղծել միջնաժամկետում տնտեսական աճի ներուժի բարձրացման ու պարտքի կայունացման համար:

Ամփոփում. Ամփոփելով նշենք, որ շարունակվող մարտահրավերների և անորոշությունների պայմաններում, 2021 թվականի հարկաբյուջետային քաղաքականության սահուն կոնսոլիդացիայի և դրամավարկային քաղաքականության արդյունավետ համադրման շնորհիվ **հնարավոր է եղել ապահովել ՀՀ-ում**

մակրոտնտեսական կայունությունը: Մի կողմից հարկաբյուջետային քաղաքականությունը կարևորել է համավարակի և Արցախյան պատերազմի բացասական հետևանքների մեղմման ուղղությամբ իրականացվող միջոցառումների շարունակականությունը, մյուս կողմից պարտքի բեռի նվազեցման ճանապարհով նախապայմաններ ստեղծել հարկաբյուջետային միջնաժամկետ կայունության ապահովման համար: Այդուհանդերձ, ստեղծված տնտեսական իրավիճակում, 2021 թվականին իրականացրած հարկաբյուջետային քաղաքականության արդյունքները որոշ չափով շեղվել են միջնաժամկետ և երկարաժամկետ նախանշված ծրագրերից: Այս համատեքստում **ԿԲ-ը կարևորում է տարվա ընթացքում հարկաբյուջետային հակացիկլիկ քաղաքականության որդեգրումը, սակայն շեշտադրում է տնտեսության երկարաժամկետ կայուն զարգացման համար պետական ծախսային ռազմավարության ճշգրտման անհրաժեշտությունը: Միևնույն ժամանակ, հարկաբյուջետային միջնաժամկետ կայունության և տնտեսական խթանների արդյունավետ համադրման շրջանակներում ԿԲ-ը ընդգծում է հարկային բարեփոխումների և բյուջետային կարգավորումների բարելավման շարունակականության ապահովումը, ինչպես նաև Կառավարության նպատակադրած թիրախներն ապահովող արդյունավետ միջոցառումների շարունակական իրականացումը:**